

## Կարծիք

Արա Մմբատի Զարգարյանի «Նախատիպի գեղարվեստականացման սկզբունքները  
Եղիշե Չարենցի պոեզիայում» թեմայով թեկնածուական ատենախոսության մասին

Եղիշե Չարենցը հայ գրականության առաջին մեծության գրողներից մեկն է, սակայն շատերի ծանոթությունը Չարենցի հետ սահմանակափակվում է նրա ստեղծագործությունների գուտ ընթերցանությամբ և քչերն են ներթափանցում բանաստեղծի հոգու գաղտնարանները: Բազմաթիվ գրականագետներ այս կամ այն ձևով անդրադարձել են Չարենցի անձին ու նրա ստեղծագործությանը: Արա Զարգարյանի ատենախոսությունը ևս նվիրված է Եղիշե Չարենցի բանաստեղծությունների ավանդական, ինչպես նաև նորարարական շերտերի քննությանը: Նյութ ունենալով գրողի ողջ ստեղծագործությունը՝ բազմակողմանիորեն փորձ է արվել առանձին գիտական ուսումնասիրությամբ քննության առնել Ե. Չարենցի գրական աշխարհը:

Ատենախոսությունը հետաքրքրական է արժարժված հարցերով, Ե. Չարենցի բանաստեղծական աշխարհի էության և յուրահատկությունների մեկնաբանությամբ, քանի որ որպես քննության նյութ ընտրված են քիչ ուսումնասիրված և կամ գրեթե չուսումնասիրված նմուշներ: Առաջադրված խնդիրներին բազմակողմ հարցադրումներով մոտեցած այս ատենախոսության մեջ հեղինակը, Ե. Չարենցի բանաստեղծությունները վերլուծելով, գնահատում է ստեղծագործությունները գրականագիտության մեջ ընդունված արդիական մոտեցումներով ու չափանիշներով: Հեղինակի կողմից ուսումնասիրության նպատակների ու խնդիրների օբյեկտիվ գնահատումներն ու ձևակերպումներն իրականացված են համապատասխան մեթոդների ճշգրիտ ընտրությամբ: Հարկ է նշել, որ ատենախոսության հեղինակը քաջատեղյակ է ոչ միայն գրականության իրողություններին, այլև դրանց արձագանքներին քննադատության ասպարեզում: Ատենախոսության արժանիքներն ակնհայտ են. վերլուծական միտք, գրական չափանիշների պահպանություն,

շարադրանքի օրինակելի լեզու, գրապատմական ու տեսական հարցերի խորքային վերլուծություններ և այլն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, որի մեջ հստակեցվում է անաջադրված նպատակների էությունը, երեք ծավալուն գլուխներից, այն է՝ «Աստվածաշնչյան պատգամի սինթեզը Կոմիտասին», «Միֆը, առասպելը և միստերիան՝ նախատիպի ընթերցման սկզբնակետ», «Կինը՝ երկու աշխարհների անցումային կետ», որոնք, իրենց հերթին, բաժանված են ենթագլուխների և ավարտուն ու ինքնուրույն ամբողջություն լինելով հանդերձ, փոխադարձաբար կապված են միմյանց, կարելի է ասել՝ մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն են, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսը Ե. Չարենցի գրական ժառանգությունը քննում է պատմահամեմատական, հոգեվերլուծական, փիլիսոփայական և տեսական հիմքերի համապատկերում: Գլուխներից յուրաքանչյուրում ատենախոսը տիպական հարցեր ու պատասխաններ է երևան բերում, ցույց տալիս նախատիպերի գեղարվեստականացման էությունը, ինչպես ինքն է նշում. «Նախատիպը կոնկրետ պատմական կամ ժամանակակից անձնավորություն է, որը սկզբնակետ կարող է ծառայել գրական պատկեր ստեղծելու համար»(էջ 18):

Հանգամանորեն վերլուծելով տրամաբանորեն ընտրված բանաստեղծությունները՝ ատենախոսն իրավացիորեն նկատում է, որ Ե. Չարենցի շատ բանաստեղծությունների պոեմատային ու կերպարային համակարգերն առնչվում են քրիստոնեական ավանդույթին: Առաջին գլխում ներկայացվում է Կոմիտասի տառապանքի ուղին՝ ըստ Չարենցի, և ականատես ենք լինում, թե ինչպես է Աստվածաշնչի գաղափարախոսական իմաստն իր նորովի արտահայտումը գտնում Ե. Չարենցի բանաստեղծություններում: Ատենախոսը հոգեբանական ու փիլիսոփայական հարցադրումների ամբողջության մեջ հետաքրքիր դիտարկումներով է արժևորում Կոմիտասի և քրիստոնեական թեմաների զուգադրումով գրված բանաստեղծությունների առանձնահատկությունները, ընդգծում դրանց թաքնված կողմերը և թվում է, թե բանաստեղծական տողերից հնչում է Կոմիտասի «լուսյան ձայնը»: Հետաքրքրական են հատկապես գեղարվեստականացման մակարդակում ներկայացված Կոմիտաս-Հիսուս



համեմատական գուգահեռները. «Չարենցը Կոմիտասին ընկալում էր որպես Հիսուս: Նախ երկու նախատիպերին գուգահեռում էր նույն գեղարվեստական հարթության մեջ՝ մեկ պոեմում, հետո՝ կենսագրական նմանությունների գուգահեռներով՝ տանջանք, տառապանք ու մահ. Կոմիտասի դեպքում բացակայում էր հարությունը» (էջ 27): Ատենախոսն առաջ է բերում այն տեսակետը, որ Կոմիտասն ազգային տառապանքի կրողն է և Կոմիտասի կերպարով Չարենցը կերտում է հարության և հավերժության իր տարբերակը:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվում են ժամանակի քաղաքական իրադարձությունները և վերջիններիս գեղարվեստական արձագանքները Չարենցի պոեզիայում: Էջ առ էջ, պահպանելով ժամանակագրությունը, կարելի է ասել դոկումենտալ կինոֆիլմի նմանությամբ ներկայացվում են քաղաքական իրադարձություններն ու ժամանակի քաղաքական գործիչները՝ Վլադիմիր Լենին, Իոսիֆ Ստալին, Ալեքսանդր Մյասնիկյան, Ադասի Խանջյան, Ամատունի Վարդանյան: Եթե Լենինի և Ստալինի կերպարներով ներկայացվում է համաշխարհային և խորհրդային իրավիճակը, ապա Խանջյանի և այլոց կերպարներով ներկայացվում է հայաստանյան իրողությունը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ քաղաքական գործիչների կերպարները ներկայացվում են ոչ միայն իրականության, այլև միֆի սահմաններում և գուգահեռվում են միֆական կերպարների հետ: Հետաքրքրական են հատկապես եգիպտական միֆ-միստերիաների հետ գուգահեռները, որոնց միջոցով առավել ցայտուն են արտահայտվում Չարենցի ընկալումներն իրականության նկատմամբ: Ընդգծենք նաև, որ այս կամ այն միֆը ներկայացնելով՝ ատենախոսը երբեմն անդրադարձ է անում նաև համաշխարհային գրականության հանրահայտ այլ գրողների ստեղծագործություններին, որոնցում հանդիպում է տվյալ միֆը կամ միֆական կերպարը, օրինակ՝ խոսվում է Էդգար Պոյի և վերջինիս «Ագռավը» և «Ուլյալում» բանաստեղծությունների մասին և այլն: Առհասարակ տարբեր գրողների ստեղծագործություններին տարված գրական գուգահեռները՝ համեմատական մեթոդի կիրառմամբ, որին հարկ եղած դեպքում դիմել է ատենախոսը, խոսում են աշխատանքի բովանդակային ընդգրկուն ու համակողմանի լինելու մասին:

Ավանդական միջակայական պատկերների, սյուժեների, մոտիվների ու կերպարների վերախմաստավորումները թույլ են տալիս ատենախոսին անգամ խոսել Ե. Չարենցի հեղինակային միջի մասին, քանի որ, ինչպես նշում է աշխատության հեղինակը. «Ստալինի ոչնչացման անհնարինությունը Չարենցին դրդում է դիմել մոգությանը՝ ցանկանալով կիրառել Ստալինի ոչնչացման տեքստային տարբերակ. (ներկայացնում է թուղթ ու գրի հնագույն ավանդույթի օրինակ, որով փորձ է արվում վերացնել Նեո-Ստալին համակարգը)...» (էջ 151): Ատենախոսության հեղինակը, վեր հանելով ծածկագրված կերպարների և միջակայական պատկերների խորհրդանշական իմաստը, գալիս է այն եզրահանգման, որ Ե. Չարենցը ոչ միայն տալիս է իր ժամանակաշրջանի քաղաքական համայնապատկերը, այլև ներկայացնում է նաև իր անձնական խնդիրներն ու բախումներն այդ անհատների հետ:

Աշխատանքի հաջորդ մասը՝ որպես առանձին անդրադարձ հեղինակի կյանքում ուրույն տեղ գրավող կանանց կերպարներին ու նրանց նվիրված բանաստեղծություններին, նույնպես առանձնանում է վերլուծության խորությամբ: Ատենախոսության հեղինակը հոգեբանական և փիլիսոփայական դիտարկումներով բացահայտում է Ե. Չարենցի հոգու գաղտնաբանները, կյանքի ու մահվան, իրականի ու անիրականի արտասովոր դրսևորումները: Բացահայտվում և նորովի են մեկնաբանվում մեծարժեք բանաստեղծությունների բազում նրբություններ: Արփենիկ, Արուս Ոսկանյան և Մագդա. Չարենցի անձնական և ողբերգական բարդ իրավիճակների ուղեկից այս կանանց նվիրված բանաստեղծությունների վերլուծությունները նույնպես զուգահեռվում են համաշխարհային գրականության նմուշներին, ինչպես նաև միջակայական և առասպելական կերպարների հետ, օրինակ՝ չարենցյան Արփենիկը նույնանում է Դանտեի Բեատրիչչին և Պետրարկայի Լաուրային, իսկ Արուս Ոսկանյանը՝ որպես աշխարհների սահմանագծային կետ նույնանում է Օսիրիսի որդի Անուբիսին:

Հարկ է նշել, որ ատենախոսության հեղինակը, տեսական հիմնադրույթները կառուցելիս, հենվում է մեծ թվով տեսական և իրական փաստերի, ինչպես նաև մինչ այս գրաքննադատության մեջ առկա արձագանքների վրա, սակայն ավելորդ, ծավալուն մեջբերումներով չի ծանրաբեռնում աշխատությունը: Ավելին նշենք՝ ատենախոսական տեքստում օգտագործված ծանրակշիռ նյութերի մանրակրկիտ



ուսումնասիրությունները խոսում են ատենախոսի մասնագիտական պատշաճ գիտելիքների և ընտրված թեմայի բազմակողմանի և ամբողջական հետազոտման հարցում անհրաժեշտ հետևողականության կարևորության մասին:

Ատենախոսական աշխատանքում ներկայացված եզրակացությունները լիովին բխում են կատարված հետազոտության հիմնական արդյունքներից:

Հրատարակված 6 հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսության բովանդակությունն ու սեղմագրում առաջադրած հիմնադրույթները համապատասխանում են միմյանց:

Ատենախոսության գիտական նորույթն ու կարևորագույն ներդրումն այն է, որ սույն աշխատությամբ ուսումնասիրության նյութ են դարձել հայտնի հայ բանաստեղծ Ե. Չարենցի պոեզիայի ոչ միայն հանրահայտ և ավանդական, այլև գրականագիտության մեջ քիչ ուսումնասիրված և ստվերում մնացած գրական երկերը:

Ա. Չարգարյանի այս ատենախոսությունն իրապես նոր ու թարմ խոսք է ժամանակակից հայ գրականագիտության մեջ: Ուսումնասիրությունը մենագրական աշխատության արժեք ունի և ըստ այդմ՝ ենթադրում ենք, որ այն լույս կտեսնի առանձին գրքով: Մենագրությունն անթերի տեսնելու հեռանկարով հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտարկումները, որոնք, սակայն, կրում են գործնական նշանակություն և բնավ չեն ստվերում գիտատեսական պատշաճ մակարդակով կատարված ուսումնասիրությունը: Այսպիսով՝

1. Ուշաբժան է, որ ատենախոսը աշխատանքի առաջին գլխում գրում է. «Քրիստոսը Չարենցի գաղափարական աշխարհում կարծես ստանում է գերագույն արժեքի դեր, և Արփենիկ-Կոմիտաս համակարգի հետ նմանությունը արդեն իսկ խոսում է գերագույն արժեքների եռամիասնական համակարգի մասին» (էջ 26): Այա, շարունակելով ուսումնասիրությունը, երրորդ գլխում նշում է. «...Լենինը զուգահեռվում է Քրիստոսի հետ, որպես աշխարհն ու մարդկությունը փոխող մարդ, Մյասնիկյանի դեպքում նա պղնձյա մարդուն փորձում է հարություն տալ: Նույնն առկա է նաև Թումանյանի և Կոմիտասի դեպքերում: Աղասի Խանջյանի մահը գեղարվեստականացնելիս

Չարենցը ևս տալիս է Քրիստոսի հետ համեմատականներ: Եվ այս համատեքստում Արփենիկը բացառություն չէր կազմելու» (էջ 121): Ջարմանայի է, որ վերոհիշյալ հատվածներում նշված նախատիպերը ատենախոսը զուգահեռում է հատկապես Քրիստոսին: Այս հանգամանքը, մեր կարծիքով, ինչ-որ տեղ հանգեցնում է նյութի և համեմատությունների անհարկի կրկնության:


2. Ատենախոսության բովանդակության բաժնում բացակայում է բավականին ծավալուն և բովանդակալից երկրորդ գլխի հինգերորդ ենթավերնագրի՝ «Հնագույն միջից և միստերիաներից «Նեո» - Ստալին համակարգի դուրսբերումը» էջանշումը (86-ից 112 էջեր) և չորրորդ ենթավերնագրին անմիջապես հաջորդում է երրորդ գլխի էջանշումը:
3. Ցանկալի է փոքր-ինչ ծավալուն տեսնել երկրորդ գլխի երկրորդ ենթավերնագիրը՝ ««Բրոնզաձույլ» Սյասնիկյանը» (էջ 65-67), որը, մեր կարծիքով, կարելի է հարստացնել բանաստեղծական մեջբերումներով և դրանց վերլուծություններով:
4. Ատենախոսության երրորդ գլխում, որը նվիրված է Չարենցի պոեզիայում տեղ գտած կանանց կերպարներին, ատենախոսը հիշատակում է Արմենուհի Տիգրանյանին և վերջինիս նվիրված «Էմալե պրոֆիլը ձեր» ստեղծագործության մասին, ինչպես նաև գրում է. «Չարենցի պատանեկան սերերի կողքին հիշատակվում է նաև Լյուսի Թառայանը: Նրան ձուլված բանաստեղծություններում ևս պահպանվում է Աստղիկից եկած սիրո վեհ զգացմունքի հրապարակային շեփոխահարումը: Ներկայացվում է նոր սերը, այդ սիրո խորհրդանիշը» (էջ 115): Ցանկալի է ատենախոսության տարբեր էջերում հանդիպող հպանցիկ ակնարկներից բացի հարցադրման ուղղությունն ավելի խորքային և ամբողջական տեսնել՝ հասկանալու համար տվյալ կանանց նախատիպերի գեղարվեստականացման սկզբունքները Չարենցի պոեզիայում: Մեր կարծիքով, կարելի էր անդրադարձ կատարել նաև բանաստեղծուհի Լեյլիի (Փառանձեմ Սահակյան Տեր-Մկրտչյանի) կերպարին և վերջինիս նվիրված «Փողոցային պարուհուն» շարքին:



5. Ինչպես նշվել է, ատենախոսության մեջ շատ են հանդիպում Չարենցի գրական ժառանգության և համաշխարհային գրականության հանրահայտ ստեղծագործությունների միջև տարվող համեմատական գուգահեռներ, սակայն երբեմն փակագծերը լիարժեքորեն չեն բացվում: Օրինակ՝ ատենախոսը նշում է. «Կնոջ բազմաձայնությունը Չարենցը կիրառում է իր մի շարք գրքերում: Դրանցում կիրառվում են նաև Հին Արևելքի բանահյուսության մեջ հանդիպող միստերիաներն ու միֆերը, որտեղ առկա է ռուս մի շարք պոետների գաղափարական ազդեցությունը: Այստեղ խոսքը միանշանակ Բլոկի և Բելիի մասին է... Բլոկի պոեզիայում առկա են աստվածային կանացիի թե՛ միֆական ընթերցումները, թե՛ քրիստոնեությունից հետո տարածված ընթերցումները» (էջ 122) և կամ աշխատանքի մեկ այլ հատվածում նշվում է. «Պոլ Վերլենի մոտ առկա է Տիրամոր պաշտամունք, գաղափարական տեսանկյունից նույնն արվում է նաև Օսկար Ուայլդի մոտ՝ քրիստոնեական խորհրդանիշով կամ գեղեցկության պաշտամունքով» (էջ 126): Ճիշտ կլիներ մեջբերումների միջոցով հստակորեն նշել, թե մեծարգո գրողների ո՞ր ստեղծագործություններն ու դրանց ո՞ր հատվածներն է նկատի ունեցել ատենախոսը, ինչը, մեր կարծիքով, առավել կհարստացներ աշխատանքի բովանդակային կողմը և կհաստատեր ատենախոսի կողմից առաջ քաշված տեսակետների հիմնավորվածությունը:
6. Աշխատանքում հանդիպում են ենթակայի և ստորոգյալի հոգնակի թվի անհամաձայնություններ (էջ 11, 34, 76, 139 և այլն):
7. Ատենախոսության առանձին հատվածներում առկա են «թվական» բառի և դրա հոլովվածների տարբեր գրություններ (էջ 26, 28, 69, 105 և այլն), սակայն ցանկալի էր տեսնել միևնույն կառույցը, որը կպայմանավորեր աշխատանքի լիարժեքությունը:
8. Ատենախոսության մեջ հանդիպում են որոշ կետադրական սխալներ, հատկապես դերբայական դարձվածի կետադրության վրիպակներ (էջ 22, 55, 109 և այլն):
- Նշված թերությունները, մեր կարծիքով, չեն ստվերում ատենախոսության արժեքը և հարկ ենք համարում նշել, որ Ա. Զարգարյանի կողմից իրականացված

գիտահետազոտական աշխատությունն ունի ատենախոսական աշխատանքի պահանջներին համապատասխանող գիտական կառուցվածք և շարադրանքը ձևակերպված է պատշաճ մասնագիտական լեզվով: Այն իր արդիականությամբ բնորոշվող, համապատասխան հետազոտական մեթոդների գրագետ գործածումով ու պահանջված ծավալով գրված ավարտուն գիտական աշխատություն է և Արա Զարգարյանն արժանի է հայցվող բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝



Բանասիրական գիտությունների թեկնածու՝


Դիանա Էդուարդի Մնացականյան

Դիանա Էդուարդի Մնացականյանի ստորագրությունը

հաստատում եմ՝

Միսոն Հակոբյան

«ՀԵՔ» հիմնադրամի տնօրեն /



01.12.2023 թ.